

հում — երեխան այլես չի կարողանում միտեղ դադար նըստել, դառնում է անհանգիստ, ճիշ է առձակում, ծամածում է երեսը, ձեռքերով շարժումներ է անում, սենեակի մէջ վաղվղում է զէս ու դէն, թռչուածում, աղաղակում և առհասարակ ամեն աեսակ շարութիւններ անում, որոնցից առաջ աղատ էր Նոր տպաւորութիւններից յուղուած, աշխուժացած երեխան, ըստ երեսութին, ձգտում է այն բանին, որ կրկին և կրկին զարթեցնէ իւր մէջ այն նոր, մինչ այդ իրան անծանօթ տպաւորութիւնները, որ զգացել է հրաշալի գործիքով կատարուած փորձերից: « Ն ու աղմուկ ու ձայններ է որոնում, ուստի այդ նպասակով սկսում է ձեռքով պատի վրայ տպապացնել կամ կահ կարասիքներին խփել և ականչ դնելով այդ ձայններին՝ այդպիսով իւր նոր զարթող լսելիքը վարժեցնել: Հետզիետէ ձայններին ընտելանալու զարգացման հետ վերականգնւում է նաև լսողական ֆունկցիան և այն նախնական աղմկալից հոգեկան-բնախօսական հակաղղեցութիւնը քիչքիչ մերժանալով՝ դրա փոխարէն աւելանում է լսողութեան գործարանի ընդհանուր կենսականութիւնը. »

Թիարգմ. Լիլիթն Մ.Ա.

ՎԱՆՔԻ ՄԻԾՐԸՆՈՒԹԵՍՆ ՈՐՈՇՈՒՄ

Մեր ընթերցողները կիշեն, որ «Լումալ»-ի առաջին տարուայ առաջին համարում մի լոդուած նուիրեցինք «քահանաների նիւթական ապահովութեան խընդըն», որի մէջ բազմակողմանի կերպով արծարծելով ալդ հարցը, ասել էինք. —

« Զմոռանանք լիշել նաև մի հանգամանք, որ պակաս անպատուաբեր չէ թէ քահանալի, թէ ժողովրդի և թէ ալն «Ճան» պաշտաման համար, որի մեծ Տէրը խարազանով դուրս արեց ալնտեղից բոլոր հատավաճառներին և լումալափոխներին: Մեր խօսքը գանձանակի լուսաթ. Բ. »

շրջեցման մասին է, որի չխչխկոցը սուրբ խորհրդի ամենավեհ, ամենանուիրական մասերում, ուր ժողովրդի մըմունջները վեր պիտի ուղղուէին Ամենակալի գահուքի առաջ, մի վայրկեանում երկնալինը երկրաւորի է փոխանակում և մշտամոռունչ աղօթողը դժգոհութեան մըրմունջը շրթունքին՝ ձեռքը անզգալապէս գրպանն է իջեցնում...»:

Այս տգեղ սովորութեան առաջն առնելու համար առաջարկեցինք վերացնել «ժամոցը, որ շրջեցնում են եկեղեցիներում իւրաքանչիւր պատարագի օրերին». իսկ դորան փոխարինել ի միջի ալլոց լարմար էինք դատել փուրաքանչիւր եկեղեցու դրան պատից միայն մի մի տուփ կախել, որի արդիւնքը մտնում է ընդհանուր կենդրոնական գանձարան»:

Պէտք է ասել, որ մեր արծարծած խնդիրները, ինչքան էլ անհաճոյ էին որոշ մարդկանց, բայց և այնպէս քննութեան նիւթ էին մատակարարում մամուլին, իսկ «ժամոց»-ի խնդիրը վաղուց արդէն սկսել էր զբաղեցնել մեր հոգևորականների մի մասին. մանաւանդշատ հետաքրքրուած էր ալդ հարցով Վանքի ա. եկեղեցու միաբանութիւնը, որի ականջին հասնում էին շարունակ ժողովրդի տրտունջները պնակների շարքով շըրջեցման առթիւ:

Մի քանի միաբանական ժողովներում միաբանութիւնն այս տարի արծարծելով ալդ հարցը և ի նկատի ունենալով թէ ժողովրդեան տրտունջները և թէ այն որ մի էական խնդիր չէ ներկալացնում եկեղեցու համար՝ նորա պաշտօնեանների այս կամ այն կերպ հասոյթն ստանալը, որ վերջապէս եկեղեցում նիւթականի խառնելը հոգևորի հետ վիրաւորում է ժողովրդի նուիրական զգացմունքները, վերջնականապէս համոզուեց, որ ժա-

մանակ է վերացնել ժամոցի այն ձևը՝ ինչպէս որ նա գոյութիւն ունի ներկալումս:

Ուստի և մի արձանագրութեամբ որոշեց վերացնել վարձատրութեան ալդ մաշուած ձևը, որից լաճախակի առաջացած ծանր հետևանքների վկալ ենք հանդիսացել մենք և գորան փոխարինել 1, ժամանակաւորապէս, որպէս փորձ, կնքուած տուփ կախելով եկեղեցու դըրնից, պատշաճաւոր ծանուցումով, — այս ժամաւորների համար, և 2, տալով իւրաքանչիւր քահանալի ձեռքը մի մի տապագրուած անդորրատետր՝ ամեն մէկը իւր ծըրից տարեկան կամաւոր ժամոցագրամ ստանալու:

Այս կարգագրութիւնը վերաբերում է քահանաներին. իսկ ինչ վերաբերում է՝ սարկաւագների ու դպիրների գանձանակներին՝ նոցա փոխարէն եկեղեցու վարչութիւնը տնօրինեց կրկնապատկել նոցա ոռճիկները՝ կրած զրկանքի փոխարէն:

Ա.անքի միաբանների այս օրինակելի կարգադրութիւնը յուս ունենանք, որ արձագանք կդտնէ և միւս եկեղեցիների պաշտօնեաների մէջ, իսկ միւս կողմից պէտք է կարծել, որ հասարակութիւնն էլ տեսնելով իւր իղձերի մարմնացումը՝ կօժանդակէ իւր հովիւներին այն ամեն բարենպատակ գործողութիւնների մէջ, որոնք հակառակ չլինելով հանդերձ Հայաստանեալց ու եկեղեցու հոգուն՝ միւնոյն ժամանակ նպաստում են եկեղեցու մէջ խիստ կարգապահութիւն պահպանելուն:

ՆՈՒԾՐՆԵՐ

1. Բարեգործ պ. Աւետիս Բ. Ղոկասեանը «Լումայ» ի 10 օրինակ նուիրումը է Շուշուայ և Երևանի թեմ. Դըպ. բոցներին, Թիֆլ. երկաթուղու բանուորների գրադարանին,